

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ առկա ուսուցման հիմնական փուլի ընդունելության ցուցակները հուլիսի 18-ին, իսկ լրացուցիչ (թափուր) փուլի ընդունելության ցուցակները հուլիսի 30-ին կտեղադրվեն ԵՊՀ [ysu.am](http://ysu.am) պաշտոնական կայքէջի [դիմորդ](#) բաժնում: Առկա ուսուցմամբ ընդունված դիմորդները, առկա ուսուցման ընդունելության կարգի 89-րդ կետի համաձայն, պահանջվող փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում նաև գնահատականների վերաբերյալ ԳԹԿ կողմից տրված վկայագիրը, պետք է սեպտեմբերի 1-ին ներկայացնեն համապատասխան ֆակուլտետի դեկանատ, [մինչ այդ ոչ մի փաստաթուղթ դիմորդը ԵՊՀ չի ներկայացնում](#):

## Առկա ուսուցման դասերը սկսվում են սեպտեմբերի 1-ից:

Այն դիմորդները, ովքեր կընդունվեն ԵՊՀ առկա ուսուցմամբ և կգորակոչվեն ազգային բանակ, պետք է ընտանիքի որևէ անդամ ս/թ սեպտեմբերի 1-ին այցելի համապատասխան ֆակուլտետի դեկանատ, ներկայացնելով առկա ուսուցման ընդունելության կարգի 89-րդ կետով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ազգային բանակ մեկնելու մասին հավաստող փաստաթուղթը և ձևակերպի տարկետում, հակառակ դեպքում դիմորդը կկորցնի իր տեղը: